Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Հայոց բանակի օրվա առիթով ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում մեր հաղթական բանակի զինվորներին եւ զորահրամանատարներին:

Հայոց բանակի ծննդյան հետ կապված են մեր նորօրյա պատմության պանծալի հիշատակներ, մեր ժողովրդի հավատավոր, հայրենասեր ու ազատասեր, արի ոգու հաղթանակներ, որոնք պարծանքով են լցնում այս տոնական օրը եւ ոգեշնչում ու զորացնում մեզ: Արդարեւ, Արցախյան ազատամարտի եւ Հայաստանի սահմանների պաշտպանության հերոսական մարտերում կազմավորված ու հասակ առած Հայոց բանակը հավատարիմ զավակն ու հպարտությունն է մեր ժողովրդի: Այսօր մեր բանակի քաջարի զինվորների եւ հրամանատարների պատվախնդիր ու նվիրյալ ծառայությամբ խաղաղ են մեր Հայրենիքի սահմանները, եւ մեր ժողովուրդն իր ազատ կյանքն է կառուցում Հայաստանում եւ Արցախում:

Աղոթում ենք, որ Աստված խաղաղ պահի մեր Հայրենիքը եւ Իր օրհնության ու շնորհների ներքո հավատքով ամուր, Հայրենիքի սիրով զորացյալ Հայոց բանակի զորաց եւ զորականաց պարգեւի քաջառողջություն, երկար օրեր, նոր ձեռքբերումներ, փառք ու պատիվ Հայրենիքի ծառայության մեջ: